Ձեզ բարձրագոյնս թոյլատրեալ է նմա խնդրեալն եռամսեայ արձակուրդ յարտասահման: Թ. 317. ապրիլ 10:

Բ.

Հայրապետական շնորհակալիք եւ օրհնութիւնք:

Կոնդակ օրհնութեան եւ գոհունակութեան յանուն Ս. Փրկչեան ազգ. հիւանդանոցի Կ. Պոլսոյ՝ վասն յղելոյ զերկոտասան համառօտ եւ զվեց ընդարձակ օրացոյցս: Թ. 291:

— Օրհնութեան եւ գոհունակութեան յանուն բնակչի Վերին Ագա գեղջ Գողթան գաւառի պ. Թադէոսի Մելիք-Բաբայեանց՝ վասն նուիրաբերելոյ նորա զ50 ռ. ի յիշատակ հանգուցեալ հօրն իւրոյ Յովհաննիսի:

***

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Մայիսի ընթացքում Սինոդը թոյլատրեց եօթներորդ աստիճանի ազգակցութեան հետեւեալ պսակները.—

Շուշուայ գաւառի Խանլեցիկ գիւղի բնակիչ Ներսէս Աւանէսեան Բալասանեանի՝ Նաշխուն Գրիգորեանի հետ, Ղարաքլիսայի բնակիչ Ռուստամ Մկրտչեանի՝ Բերսաբէ Աբրահամեանի հետ եւ Նովրուզ գիւղացի Վարդան Նազարեանի՝ Երմոնիա Եփրեմեանի հետ:

Ապրիլի 5-ին Սինոդը որոշեց — հրամայել Երեւանի Կոնսիստորիային, որ Թարգմանի Ախլաթեան գիւղի ծխատէր Պօղոս քհնյ. Տէր Ղազարեանի մասին եղած գործը անչափահաս Նազանի Առուստամեանի պսակի մասին եւ ուղարկի Սիսեանի քննիչին, որն արդէն ձեռնարկել է յիշեալ գործի քննութեան Սինոդի Սեպտեմբերի 19-ին կայացրած որոշման համաձայն:

Ապրելի 9-ին Սինոդը թոյլատրեց Ալիղամար գիւղացի Իսկեանդար Յակոբեանի և օր. Վարդուհի Վարդանեանի պսակը ազգակցական վերերորդ աստիճանում՝ նրանց մէջ եղած խորթութեան պատճառով։

Նոյն թուին որոշեց խիստ յանդիմանութիւն կարդալ Թիֆլիսի Կուկիոյ Ս. Աստուածածին Նորաշէն եկեղեցու ծխատէր Աղէքսանդր քհնյ. Տէր Յովհաննիսեանին 1902 թուի յուլիսի 8-ին Կոնսիստորիայի դիւանում անդամներին անպատուելու համար։

Ապրելի 14-ին Սինոդը որոշեց հրամայել Վարաբաղի թեմական Կոնսիստորիային՝ ռուսերէն թարգմանել Սինոդի 1902 թուի օգոստոսի 21-ին կայացրած օրագրական որոշումը Նիժի գործակալ Վաղարշակ քհնյ. Ճոտանեանցին և Գրիգորել գիւղի ծխատէր Խաչատուր քհնյ. Տէր Գրիգորեանին մարմնաւոր իշխանութեան յանձնելու մասին՝—առաջինին կաշառակերութեան, իսկ երկրորդին՝ անչափահաս և չհաս պսակներ կատարելու պատճառով և ուղարկել այն Գանձակի նահանգական դատարանի քննիչին։

Օտար դաւանութեանց հոգևոր գործոց դէպարտամենտը սոյն տարուայ յունվարի 29-ին առանձին գրութեամբ դիմելով Սինոդ, խնդրել էր ցոյց տալ, թէ որ ուսանողին է տրուում Փրիդոնեանի կտակած 9000 ռուբլու %-ը, որը յատկացուած է կայսերական համալսարաններից մինում սովորող լուսաւորչական երիտասարդին ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի որոշմամբ և ընտրութեամբ, և ուր պէտք է ուղարկել յիշեալ գումարի տոկոսը. հրամայեցին.— որովհետև Սինոդում տեղեկութիւն չկայ, թէ բարձրագոյն դպրոցում սովորող ո՞ր ուսանողին է տրուում ստացուող տոկոսները և ուսանողի ընտրութեան իրաւունքը վերապահուած է Վեհափառ Հայրապետին, ուստի ամենախոնարհաբար դիմել Նորին Սրբութեան և խնդրել պահանջուած տեղեկութիւնները օտար դաւանութիւնների հոգևոր գործոց դէպարտամենտին ուղարկելու համար։

Նոյն թուին Սինոդը որոշեց մատուցանել Նորին Սուրբ Օծութեան Ապրիլի 3 ին տուած կոնդակով պահանջած՝ հետևեալ անձանց ծառայութեանց ցուցակները.—Յովհաննէս եպիսկոպոս Շիրակունու, Ղևոնդ եպիսկոպոս Յովակիմեանի, Կիւրեղ, Եղիշէ Մուրատեան, Մեսրոպ, Խաչիկ, Արսէն, Կարապետ, Յուսիկ, Կորիւն, Եղիշէ Ահարոնեան և Մամբրէ վարդապետների։

Ապրելի 19 ին Սինոդը թոյլատրեց Ախալցխայի բնակիչ Ռափայէլ Մելքոնեան Մինասեանի և օր. Եւպրաքսէ Գրիգորեանի պսակը՝ խնամութեան չորրորդ աստիճանում։

Նոյն թուին Սինոդը հրամայեց Թիֆլիզի Կոնսիստորիային անմիջապէս պահանջել Տէր Արսէն վարդապետ Ղլթճեանից մի հաղար չորս հարիւր ռուբլին և հետևանքի մասին տեղեկագրել Սինոդին։

Ապրիլի 26 ին որոշեց մերժել Երևանի Կոնսիստորիայի միջնորդութիւնը Կարապետ Մխիթարեանի ձեռնադրութեան մասին՝ վերջնիս տգիտութեան պատճառով։

Նոյն թուին Սինոդը լուծեց Խոսպիացի Սահակ Երիցեանի ամուսնութիւնը նրա տաժանակիր աշխատանքի դատապարտուած և աքսորուած լինելու պատճառով և իրաւունք տուեց նրա կողակից Եւա Երիցեանին նորից ամուսնանալու։ Սինոդը նոյն թուին լուծեց Աղէքսանդրապոլի բնակիչ Համբարձում Պաւլիկեանի ամուսնութիւնը Բալասան Պաւլիկեանի հետ՝ վերջնիս ամուսնական կեանքին անընդունակ լինելու պատճառով և իրաւունք տուեց Համբարձումին նորից ամուսնանալու։

Ապրիլի ընթացքում Սինոդը հոգևորականութեան մէջ ընդունեց Շարուր—Դարալագեազի գաւառի Քէշիշքենդ գիւղացի Թէոդորոս Տէր Կարապետեանին, Աղէքսանդրապոլցի Համբարձում Տէր Գէորգեանին և Մաղրասա գիւղի բնակիչ Յարութիւն Բաղրամեանցին, որոնցից առաջին երկուսին հրամայեց ձեռնադրել քահանայ։

Որովհետև Գանձակի Տ. Նահանգապետը համաձայնութիւն չը տուեց Բագալ Տէր Սիմօնեանին, Աբրամ Աբրանեան Սարումեանցին և Կոստանդին Աթայեանին հոգևորականութեան մէջ ընդունելու, ուստի Սինօդը որոշեց կարճել նրանց մասին սկսած գործը։

Մայիսի 3-ին Սինօդը լուծեց Նախիջևանի գաւառի Մորվանիս գիւղացի Հռիփսիմէ և Գալուստ Արզմանեանցների պսակը և իրաւունք տուաւ Գալուստին նորից ամուսնանալու։

Նոյն թուին Սինօդը որոշեց տանից պահանջի թողնել Սիօն վարդապետից պահանջուող 51 ռուբլի՝ պակասած պտղի արդեանց արժէքը Վեհափառ Հայրապետի կրկին կոնդակների համաձայն։

Նոյն թուին Սինօդը հաստատեց Ղարաբաղի Կոնսիստորիայի սոյն տարուայ մարտի 22-ի 582 վճիռը, որով տէր Ներսէս և տէր Հմայեակ քահանաներին դատապարտել էր ապօրինի կանայք պահելու և այլ և այլ կանանց հետ կենակցելու պատճառով՝ Տէր Ներսէսին մի տարուայ ապաշխարանքի ձալէթի վանքում, իսկ Հմայեակ քահանային՝ վեց ամսուայ ապաշխարութեան Ամարասի վանքում։

Խմբագրութեանս տուած հարցերն ու պատասխանները.

«Շատ անգամ պատահում է, որ Հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ քահանաներից մէկը՝ ի նկատի ունենալով իր անձնական շահերը, փոխադրւում է քաղաքի մի եկեղեցուց միւսը։ Այդպիսի դէպքում այդ քահանայի ծուխը ո՞ր եկեղեցուն կը պատկանի. արդեօք ծուխն էլ հետը պէտք է տանի և եկեղեցին ծխից աղքատացնի, թէ ծուխը մնալու է իր նախկին եկեղեցուն։

Խմբագրութիւնս Նորին Ս. Օծութեան հրամանով պարտք է համարում յայտնել, որ մի եկեղեցուց միւսը կարող է փոխադրուել քահանան և այդ էլ ապա ծուխ եղած դէպ-

քում. իսկ եթէ համաձայնում է փոխադրուիլ առանց այսպիսի պահանջի, այդ դէպքում նրա ծուխը մնում է ծուխ նախկին եկեղեցու և հետևապէս նա զրկւում է նրանց հովանաւորու իրաւունքից։

«Եթէ որ և է եկեղեցին չունի աւագ քահանայ, այդ եկեղեցում ո՞վ է աւագ համարւում և օգտւում ժամերգնողի իրաւունքով»։

Հայաստանեայց եկեղեցու նախնաւանդ սովորութեան համաձայն մի քանի քահանայ ունեցող եկեղեցին պէտք է ունենայ միմիայն մի աւագ քահանայ, որև իրաւունք ունի ժամերգնելու։ Իսկ եթէ եկեղեցում կան մի քանի աւագ քահանաներ, կամ ոչ ոք աւագութեան պատուի դեռ չի արժանացել, այդ դէպքում ժամերգնողի և աւագի իրաւունքով օգտւում է ձեռնադրութեամբ աւագը, թէ կուզ մի քանի ժամ առաջ ձեռնադրուած լինի նա։